Ավետիք Իսահակյան

Իմ փերին

(Շիրակի ավանդավեպ)

Կես – գիշերին, գետի ափին
Ես նստած եմ սիրավառ.
Գետն հոսում է, և հոսանքին
Ես նայում եմ միալար:

- Ո՞վ է՝ անդորը, լուռ գիշերով
Մենությունըս խռովում.
Շուշան – կրծքով, լույս թևերով
Նիրհած գետը վրդովում:

Ո՞վ է հագած լուսնի շողեր՝
Շքեղ կանգնում առաջիս.
Սև մազերին գոհար – ցողեր՝
Հուր շշնջում ականջիս:

Ո՞վ է ծագող լույսերի հետ
Ծաղիկները համբուրում.
Երազի պես ցնդում անհետ
Մշուշային փրփուրում:

Նա փերին է զմրուխտ գետի,
Ցնորքներիս սիրելին.

Դիցուհին է իմ վառ սրտի,
Վառ երգերիս նազելին:
Եվ մինչև լույս գետի ափին
Ես նստած եմ քարացած.
Գետն հոսում է, և հոսանքին
Ես նայում եմ շվարած…

1892
Արգինա